

Տեկանդեր (Tekander) Գերմանիոյ Կայսեր տեղակալ ղեկավարն էր. այս առթիւ հանդիպելով էջմիածին, տեսակցութիւն ունեցաւ (Դաւիթ) կաթողիկոսին հետ: Կաթողիկոսը, որ զիտէր թէ մօտաւուտ է Երեւանի անկումը, կը խրնդէր ղեկավարին միջնորդութիւնը Շահին քով, «որպէս զի հաճի թոյլ տալ Հայոց պահպանել կրօնի, քրիստոնէութեան եւ այլ հինաւուրց ազատութիւնները. եւ ամէնը, ինչ որ դրաւած էին իրենցմէ թուրքերը, վերադարձուին իրենց»⁴: Իրերը ուրիշ կերպարանք առին սակայն: Նոյն 1604 տարւոյն իմանալով Շահ Արամ, թէ Օսմանեան ահեղ բանակ մը Զիքաւայ փաշայի առաջնորդութեան տակ կը քալէ իր վրայ, կ'որոշէ Այրարատեան դաշտը մինչեւ Դաւրէժ դատարկել, բնակչութիւնը բռնի տեղահանել եւ փոխադրել Պարսկաստան: 1604 Նոյեմբեր—Դեկտեմբեր ամիսներուն, երբ ձմեռը սաստկացած էր Այրարատեան դաշտին վրայ, հայ բնակչութիւնը կը տեղահանուի: Անոնց թուին մէջ էին նաեւ Դաւիթ եւ Մելքիսեդեկ կաթողիկոսները: Յաջորդ տարին կը դատարկուի նաեւ Հին Զուղան, այս բարեկեցիկ քաղաքը, եւ բնակչութիւնը կը տեղափոխուի Սպահան, ուր քաղաքի արուարձանին մէջ ցոյց կը տրուի իրենց նոր բնակավայր, զոր կ'անուանեն Նոր Զուղայ:

⁴ St. Kakasch, Iter Persicum. Kurze, doch ausführliche und wahrhaftige Beschreibung der Persianischen Reise. Altenburg 1609, էջ 115. հմտ. A. Johannissjan, Israel Ory und die armenische Befreiungsidee. München 1913, էջ 34.